# Հայտարարություն

1. 2017թ. հունիսի 16-ին, ժամը 11-00-ին , տեղի կունենա «Արփա-Սևան» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը: Հասցեն՝ ք. Երևան , Վ.Վաղարշյան - 20:
2.Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2017թ. հունիսի 12-ի դրությամբ:

## Տարեկան ժողովի օրակարգը

3.1. Ընկերության 2016թ.տարեկան հաշվետվության հաստատումը;
3.2.Ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը;
3.3.Շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման մասին որոշման ընդունումը;
3.4. Խորհրդի անդամների ընտրությունը;
3.5. Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը:

## Բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը

4.1.Հաստատել 2016թ. տարեկան ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը, կորպորատիվ կառավարման հայտարարագիրը:
4.2. Հաստատել ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
4.3. Հաստատել շահույթի բաշխման հետևյալ որոշումը՝
Ընկերության 2016թ. 195 874 000 ՀՀ դրամ զուտ շահույթից՝

- 153 390 000 ՀՀ դր. օգտագործել շահութաբաժինների վճարման համար;
- 35 000 000 ՀՀ դր. թողնել Ընկերության տնօրենի տրամադրության տակ, մինչև հաջորդ ընդհանուր ժողովը ընկած ժամանակահատվածում, նյութական օգնության և սոցիալական ուղղվածության, բարեգործական, ինչպես նաև այլ նպատակների օգտագործման համար:
- 7 484 000 ՀՀ դր. կուտակել ընկերության կուտակված շահույթի ֆոնդում և անհրաժեշտության դեպքում օգտագործել հիմնական միջոցների ձեռք բերման և այլ կարիքների համար: